ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2026 թվականի N 47 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 344-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Ներքին Խնձորեսկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2026 թվականի փետրվարի 4-ի գրությունը և «Ներքին Խնձորեսկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2026 թվականի փետրվարի 3-ի թիվ 5 արձանագրությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 21-ի N 235-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 344-Ա որոշման N 9 հավելվածում «Սաթունց Սաթենիկ» բառերը փոխարինել «Հովսեփյան Համեստ» բառերով:

2026-02-06 10:20:38 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026 թ. փետրվարի 5

ք. Կապան